

## 2. Բարոյագիտական ակներեւութիւն

(անգլ.՝ Evidence, գերմ.՝ Evidenz),

որ կը յատկանշուի իր ակներեւ (ակնյայտնի) բացայայտութեամբ. այս իւրայատուկ ու որակաւոր հանգամանքը կը պարտինք մարդկային մասնաւոր ճանաչողական - իմացական մէկ կարողութեան:

Բարոյագիտական ակներեւութեան ոլորտի մէջ, օրինակ, կարելի է զանազանել՝ տրամաբանական մակածութեան (Induction) եւ տրամաբանական հետեւութեան (Deduction) միջեւ.-

### Ա. Տրամաբանական մակածութիւնը

(անգլ.՝ Logical Induction, մասնակիէն՝ դէպի ընդհանուրը)

Այս ուղին ընդունող ներկայացուցիչներուն ելակետը կը կազմէ այն տեսութիւնը, որ մեր հիմնական բարոյական դատողութիւնը կը վերաբերի առարկայական գոյացութիւններու (ինչպէս՝ վարմունքներ կամ կացութիւններ): Այլ խօսքով, այս հիմնական բարոյական դատողութեան ակներեւութիւնը կը բխի զգայական իմացութենէ (կամ գիտակցութենէ) մը, որ կը վերաբերի յիշեալ առարկայական գոյացութիւններուն: Նմանօրինակ մտապատկեր կարելի է գտնել ամերիկացի ժամանակակից բարոյագետ-փիլիսոփայ **ՍկՆօտոնի** (David McNaughton, \*1946 թ.) մօտ, իր «Բարոյական տեսիլք» (անգլ. բնագիր՝ „Moral Vision”) երկին մէջ:

### Բ. Տրամաբանական հետեւութիւնը

(անգլ.՝ Logical Deduction, ընդհանուրէն՝ դէպի մասնակին)

Այս ուղին ընդունող ներկայացուցիչներուն ելակետը կը կազմէ այն տեսութիւնը, որ մեր (մարդոց) հիմնական բարոյական դատողութիւնը, մեր բարոյական սկզբունքներուն միջոցով հիմնաւորուած է: Այլ խօսքով, այս հիմնական բարոյական դատողութեան ակներեւութիւնը կը բխի բարոյական սկզբունքներու ներհայեցողութենէն (Intuition): Նմանօրինակ մտապատկեր կարելի է գտնել՝ «*ներհայեցողական բարոյագիտութեան*» ներկայացուցիչներէն սկոտլանդացի բարոյագետ-փիլիսոփայ **Ռոսի** մօտ (William David Ross, 1877 – 1971 թ.), իր «Բարոյագիտութեան հիմունքներ» (անգլ. բնագիր՝ „Foundations of Ethics”) երկին մէջ:



Ստորեւ, բարոյագիտութեան հիմնաւորման ծրագրի պարզաբանուած աղիւսակ մը, ուր ամփոփ կը ներկայացուի վերոյիշեալ տրամաբանական ուղին: